

ԶԳԵՐԱԶԱՆՑՎԱԾ ԱՐՈՎՅԱՆԱԳԵՏԸ

(Պիոն Հակոբյանի ծննդյան 85-ամյակի առթիվ)



Պիոն Հակոբյանը ծնվել է 1926 թ. հոկտեմբերի 24-ին Վրաստանի Ախալցքիսայի շրջանի Ծղալթբիլա գյուղում: 1950 թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը: Ասպիրանտական ուսումնառությունն իրականացրել է ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի ասպիրանտուրայում: Նրա թեկնածուական ատենախոսությունը Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի ստեղծագործական պատմությունն էր: Բանասիրական գիտությունների թեկնածու է դարձել 1953 թ.: Նրա հետագա ողջ կյանքը կապված էր ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան ինստիտուտի, Երևանի պետական համալսարանի և «Լրաբեր հասարակական գիտությունների» հանդեսի հետ. առաջինում տեքստաբանության ամբիոնի վարիչն էր, երկրորդում դասախոսում էր, իսկ երրորդում հանդեսի գլխավոր խմբագրի տեղակալն էր: Պ. Հակոբյանն

առաջնակարգ հայագետ էր, աղբյուրագետ, բացառիկ հմուտ հետազոտող և ապշեցուցիչ աշխատասիրության տեր: Նրա նվիրումը հայ մշակույթին, պատմությանը, գրականությանը հիացմունք է պատճառում: Նա իր վաստակով կանգնած է հայ նշանավոր այն մտավորականների կողքին, որոնք առաջադեմ ժողովուրդների չափանիշներով գնահատեցին հայ գրականության ձեռքբերումները և հարստացրին մեր գրականագիտական միտքը, գիտահետազոտական բնագավառը՝ ունենալով իրենց ասելիքը և իրենց աշխատություններով բերելով ծանրակշիռ ներդրումներ:

1955 թ. լույս է տեսել Պ. Հակոբյանի անդրանիկ մենագրությունը՝ «Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի ստեղծագործական պատմությունը» խորագրով: Խորհրդային տարիներին աբովյանագիտությունը բնականոն զարգացում ապրեց: Բավական է հիշել, որ 1939 թ. Հայաստանի պետական հրատարակչությունը լույս ընծայեց Խ. Աբովյանի «Ընտիր երկեր» եռահատոր գրքերը, որոնց կազմողը, ծանոթագրողն ու առաջաբանի հեղինակը Ռուբեն Զարյանն էր: Սրան հետևում է 1947 թ. հրատարակվող՝ Խ. Աբովյանի երկերի լիակատար ժողովածուն՝ տասը հատորով, որի նախաձեռնողը ՀՀ ԳԱԱ նախագահ Վիկտոր Համբարձումյանն էր, իսկ խմբագրական կոլեգիայի կազմում էին Ավ. Իսահակյանը (գլխավոր խմբագիր), Ե. Շահազիզը, Միմակ Սահակյանը, Ստ. Զորյանը և Մ. Մկրյանը: Մինչև Պ. Հակոբյանը Խ. Աբովյանի ստեղծագործությանը խորհրդային շրջանում անդրադարձել են Ա. Տերտերյանը, Ա. Չոպանյանը, Ն. Ադունցը, Ա. Բակունցը, Ա. Ղանալանյանը, Ե. Շահազիզը, Վ. Պարտիզունին և ուրիշներ: Սակայն այս ընթացքի մեջ բոլորովին նոր էջ է բացում Պիոն Հակոբյանը: Նա բարեխղճորեն անդրադառնում է աբովյանագիտության ընթացքին ու ձեռքբերումներին և ներկայացնում սեփական հետա-

գոտական դիտարկումները, որոնք ակնհայտորեն թարմաշունչ էին ու նորացված հենց նրա առաջին մենագրության մեջ:

«Վերք Հայաստանի» վեպի ստեղծագործական պատմությունը ներկայացնող գրքում Պ. Հակոբյանը վերջնականորեն ճշգրտում է վեպի գրության թվականը, պարզում, թե քանի տարբերակ է ունեցել ու ինչ հանգամանքներում է ստեղծվել, և, վերջապես, ովքեր են եղել վեպի հիմնական դեմքերի նախատիպերը: Գրականագետը տեսանելի ձևով ներկայացնում է Աբովյանի կողմից իր գլուխգործոց վեպի խմբագրման ողջ ընթացքը: Նա բերում է այսպիսի ուշագրավ դիտարկում մեծ լուսավորչի հուշերից. «Էսօր էլ, որ մտածում եմ, թե Ջանգվի կամրջի վրովը, յա բազարի մեյդանովն անց կենալիս ինչպես էր իմ լուսահոգի հերը ինձ ոտով, ձեռով անում, չունքի լեզվով խոսալն էլ դազաբի էր բերում, որ թեզ անց կենանք, մեզ թուրք չտեսնի, որ մտածում եմ, թե քանի քանի անգամ հենց մեր այգումը յա մենք ենք ղզբաշ յարալու արել, յա նրանք մեզ, ջանս վրես սրտում ա, միսս վեր թափում», - գրել է Աբովյանը տասնամյակներ հետո, «Վերք Հայաստանի» վերջին խմբագրության վրա աշխատելիս»¹:

Թեպետ մենագրությունը նվիրված է «Վերք Հայաստանի» վեպի ստեղծագործական պատմությանը, գիտնականն այն իրավամբ շաղկապում է գրողի կենսագրության՝ իր կողմից ճշգրտված փաստերի հետ:

Ուսումնասիրելով գրողի դորպատյան ուսումնառության տարիները՝ Պ. Հակոբյանը համոզված փաստում է, թե հենց այդ տարիներին է գրողը որոշել հանրությանը ներկայացնել հայ ժողովրդի իրական վիճակը:

Պ. Հակոբյանը շեշտում է, թե Աբովյանը ջանացել է տալ իր ապրած ժամանակաշրջանի իրական պատկերը. «...եթե ուզում ես մի ինքնատիպ բան ունենալ, ապա պիտի ասել այն, ինչ որ կա, բայց ոչ հնարել»²: Գրականագետը նշում է Աբովյանի գործնական նպատակները. Աբովյանն ընտրում է հենց իր ապրած ժամանակը, որպեսզի իր ժամանակակիցները գիտակցեն, թե որոնք են հայոց կյանքի խոցերը, հայ ժողովրդին բուժել իր վերքերից, օգնել նրան դուրս գալու այդ օրհասական վիճակից:

Ճշգրտելով վեպի ավարտի թվականը՝ Պ. Հակոբյանը գրում է. «Ուրեմն, վեպի սնագիրը 1842 թվի սկզբներին արդեն ավարտված է եղել, ինչպես նաև արտագրված, հակառակ պարագայում Հովհաննես Կարբեցին, իբրև կենդանի մարդ, չէր հիշվի այնտեղ»³: Հետազոտողը հանգամանորեն խոսում է վեպի կերպարների նախատիպերի մասին: Աբովյանագիտության համար կարևոր խնդիր էր պարզել, թե ով է եղել Աղասին՝ իրական-պատմական անձնավորություն, հեղինակի երևակայության արդյունք գաղափարատիպ, թե՞ հենց ինքը՝ Աբովյանը, Աղասու կերպարով: Չմոռանանք՝ Գ. Սունդուկյանն իր գլուխգործոցի գլխավոր կերպարի մասին ասում էր՝ Պեպոն հենց ինքն է, միայն կիներոյի անվան տակ: Գրականագետը Աղասու վերաբերյալ եզրահանգում է. «Վերք Հայաստանի» կենտրոնական հերոս Աղասին եղել է իրական անձնավորություն, քանաքեռցի, Աբովյանի հեռավոր ազգականը»⁴: Պ. Հակոբյանն իր աշխատության մեջ մատնացույց է անում «Վերք Հայաստանի» վեպի այն հատվածները, որոնց մրտքերը փոքր-ինչ տարբեր ձևով կրկնվում են

¹ Հակոբյան Պ., Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի ստեղծագործական պատմությունը, Ե., 1955, էջ 13-14:

² Նույն տեղում, էջ 51:

³ Նույն տեղում, էջ 103:

⁴ Նույն տեղում, էջ 162:

գրողի ուրիշ գրվածքներում, կամ մեծ լուսավորչի «Նախաշավիղ կրթության» գրքից բերում է Աղասուն բնութագրող և գուգորդում Շիլլերի մի բանաստեղծության հետ⁵։ Տարիների հետ Պ. Հակոբյանի նվիրումը Խ. Աբովյանին ու հայագիտությանը առավել մեծ մղումներ է ստանում, որի արդյունքը դառնում են նորանոր խորագնա ու ճշմարտացի հետազոտությունները, որոնց հիմքում ընկած են նրանց հեղինակի որոնած ու գտած փաստերը։ Բսկ այդ փաստերը նա որոնում էր նախ Հայաստանի արխիվներում, ապա Խորհրդային Միության այն գրադարաններում ու արխիվներում, որոնցում հնարավոր էր գտնել որևէ փաստ Խ. Աբովյանի մասին։ Այդ նպատակով նա եղել է նաև Դորպատի համալսարանում, որն այսօր էլ իր հիմնական շենքով պահպանում է Խ. Աբովյանի տարիների շունչը։

«Խաչատուր Աբովյան. կյանքը, գործը և ժամանակը (1809-1836)» թեմայով գիտնականը 1968 թ. պաշտպանում է դոկտորական ատենախոսություն, որի հիմքում ընկած էր նույն խորագրով ստվարածավալ մենագրությունը (798 էջ)՝ լույս տեսած 1967 թ.։ Ակադեմիական այդ հրատարակությունից պարզ են դառնում գիտնականի խոր գիտելիքները ոչ միայն Խ. Աբովյանի ապրած դարաշրջանի, այլև նրա կյանքին նախորդած XVIII դարի և նրան հաջորդած ժամանակահատվածի պատմական ու մշակութային կյանքի վերաբերյալ։ Գրքում օգտագործված են հարուստ փաստագրական ու արխիվային նյութեր, որոնք հեղինակը քաղել է Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանից, Էստոնիայի պետական կենտրոնական պատմական արխիվից, Տարտուի համալսարանի դիվանից, Լենինգրադի ԽՍՀՄ պետական կենտրոնական պատմական արխիվից, Լենինգրադի մարզային պետական պատմական արխիվից, Հայաստանի պետական պատմական արխիվից, Մոսկվայի պետական կենտրոնական պատմական արխիվից, Վրաստանի պետական կենտրոնական պատմական արխիվից, Երևանի ու Թիֆլիսի գավառական դպրոցների դիվաններից, Տարտուի համալսարանի դիվանից ու նույն համալսարանի գիտական գրադարանի ձեռագրերի բաժնից, Կովկասի հնագիտական հանձնաժողովի հավաքածուի ակտերից, Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի վավերագրերի բաժնից, այդ թվում՝ կաթողիկոսական դիվանից, ակադեմիկոս Բ. Ֆրենի թողոններից, Ա. Երիցյանի հավաքածուից և այլն։ Այդ առթիվ Պ. Հակոբյանը գրքի «Երկու խոսք» վերտառության ներքո գրում է. «Այս աշխատությունը գրելու միտքը ծագել է ավելի քան տասնհինգ տարի առաջ, երբ հեղինակը իր թափառումներն սկսեց հնօրյա վավերագրերի ու ձեռագրերի անծայր աշխարհում։ Ցանկանալով որքան կարելի է լիակատարությամբ ընդգրկել հետազոտվող նյութին վերաբերող փաստերն ու վավերագրերը և չբավարարվելով Հայաստանի դիվաններով, գրադարաններով ու թանգարաններով, հեղինակը 1953 թ. սկսած մի շարք ուղևորություններ է կատարել Մոսկվա, Լենինգրադ, Տարտու, Կիև, Տիֆլիս, Կազան, անձամբ քրքրել հիշյալ քաղաքների դիվաններն ու գրապահոցները, որոնք անհրաժեշտ ատաղձներ իր ուսումնասիրության համար»⁶։

Պ. Հակոբյանի համար նվիրական վայր է եղել Քանաքեռում գտնվող՝ մեծ լուսավորչի տուն-թանգարանը, որի համար նա գրել ու հրատարակել է «Խ. Աբովյանի տուն-թանգարան» ուղեցույցը. այն ունեցել է մի քանի հրատարակություններ։ Ուղեցույցի մեջ գիտնականը շեշտում է հետևյալ կարևոր իրողությունը. «Աբովյանը հայրենի երկրի առաջին լուրջ ուսումնասիրողն է, տնտեսագիտական, երկրաբանական ու բնագիտական հետախուզումների նպատակով

⁵ Նույն տեղում, էջ 168։

⁶ Հակոբյան Պ., Խաչատուր Աբովյան. կյանքը, գործը, ժամանակը (1809-1836), Ե., 1967, էջ 5։

Հայաստան այցելած եվրոպացի և ռուս գիտնականների ու ճանապարհորդների ուղեկիցն ու խորհրդատուն⁷:

1978 թ. լույս է տեսնում հայագիտության ու պատմագրության համար ներդրումային մի ժողովածու, որի մեջ ամփոփված էին Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միանալու արձագանքները հայ գրականության մեջ: Ժողովածուի բնագրերը պատրաստել, ներածությունն ու ծանոթագրությունները գրել էր Պ. Հակոբյանը: Այստեղ ի մի են բերված հայ նոր գրականության բոլոր ժամանակահատվածներում ազգային գրողների ու մտավորականների արձագանքները 1820-ական թթ. II կեսի ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմներին, ռուսական կայսրության բանակի հաղթանակի շնորհիվ հայ ժողովրդի պատմական կյանքի նոր շրջադարձը, որն իր պապենական տարածքների վրա ապրող հայերին ազատագրում է մահմեդական պետությունների լծից և կապում քրիստոնյա Ռուսաստանի հետ: Այդ շրջանում թե՛ պաշտոնական և թե՛ բանահյուսական գրականության մեջ հանդես են գալիս նշված պատերազմների հերոսները, որոնցից մեկը ռուսական բանակի հայազգի գեներալ Մադաթովն է, որը որակվում է որպես իսկական Հայկազուն:

Որք խորհեին զՀայս նուաճել ընդ ձեռով,

Զորս կոտորել և զորս տանիլ լըկելով:

Վրեժխնդիր նոցա նախ՝ Աստուած գովով,

Ապա եղև Հայկազուն քաջն Մատաթով⁸:

Գրքի բնագրերն սկսվում են «Հայ ազատագրական լեգենդը» փաստաթղթով և Միմենոն Երևանցու՝ Եկատերինա կայսրուհուն ուղղված շարականով: Բազմաթիվ անանուն հեղինակների գործերի կողքին ներկայացվում են Գեորգ Խուբովի, Մերովրե Պատկանյանի, Ներսես Աշտարակեցու, Հարություն Ալամդարյանի, Մեսրոպ Թաղիադյանի, Խաչատուր Աբովյանի, Առաքել Աստվածատրյան Արարատյանցի, Գաբրիել Պատկանյանի, Բաֆֆու, Պերճ Պոռոջյանի, Հովհաննես Թումանյանի, Ավետիք Իսահակյանի և այլ ազգասերների արձագանքները:

Շատ ուշագրավ է Խ. Աբովյանի «Մուտ Հայկայ ի Հայաստան եւ արհաւիրք երեւակայութեան» դրամատիկ պատկերը, որը գրողը հորինել է 1830 թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսների միջոցին, երբ Պետերբուրգից մեկնում էր Դորպատ: Դրամատիկ չափածո պատկերում խոսում են Հայկ նահապետը, նրա կինը, որդիներն ու թոռները: Հայկի որդիներն իրենց հորը բացատրում են, թե նրան անծանոթ ռուս ազգը եկել է իրենց փրկելու:

Հայկ

Ռո՞ւք... Ո՞վ են, յոր աշխարհէ,

Յո՞ր սերնդոց կամ յո՞ր տոհմէ:

Ասացէ՛ք ինձ, որդի՛ք Հայկայ,

Ինձ այդ անուն օտար հնչէ:

Որդիք

Ի հիւսիսոյ՝ խաչագարդեալ՝

Եկին փրկել զաշխարհ, զազգ մեր

Ընդհանրապես որդիք օրհնեալ

Տիեզերաց աւետարէր⁹:

⁷ Հակոբյան Պ., Խ. Աբովյանի տուն-թանգարան, Ուղեցույց, Ե., 1976:

⁸ Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միանալու արձագանքները հայ գրականության մեջ, Բնագրերի պատրաստումը, ներածությունը և ծանոթագրությունները Պ. Հակոբյանի, Ե., 1978, էջ ԻԸ:

⁹ Նույն տեղում, էջ 81:

Երևանի պետական համալսարանի հրատարակչությունը 2003 թ. Գալուստ Կուլպենկյան հիմնադրամի հովանավորությամբ և ԵՊՀ հայագիտական կենտրոնի նախաձեռնությամբ լույս է ընծայել Պ. Հակոբյանի «Հայագիտական ուսումնասիրություններ» ժողովածուն, որում տեսնում ենք հայագետի հետաքրքրությունների մեծ շրջանակը. հայ էկեղեցու պատմություն, հայագետներ, հայ-ռուսական գրական աղերսներ և այլն: Այս գրքում հատկապես մեծարժեք է նրա հետազոտությունը՝ նվիրված հայ միջնադարյան գրականության մեծ գիտակ Հովհաննես Շահխաթունյան պատմաբանին, հնագետին, մատենագետին: Հովհ. Շահխաթունյանի մասին շատ ջերմ տողեր է գրել ֆրանսիացի նշանավոր հայագետ Մարի Ֆելիսիտե Բրոսսեն, որը 1848 թ. ձմռանը Էջմիածնի մատենադարանում ծանոթացել է այնտեղ պահվող հայկական ձեռագրերին: Դրանց ցուցակը կազմել էր Շահխաթունյանը, ու Բրոսսեն այն թարգմանում է ռուսերեն ու ֆրանսերեն¹⁰ այն տեսքով, ինչ կազմել էր Շահխաթունյանը: Բրոսսեի կարծիքով, հայկական այդ ձեռագրացուցակը հետաքրքիր նորություններ է բերում հատկապես պատմական և աշխարհագրական դիտակետից: Պ. Հակոբյանը փաստում է այն կարևոր ներդրումները, որոնք Հ. Շահխաթունյանը կատարել է հայագիտության մեջ՝ նրան կոչելով հայագիտության մեծ երախտավոր:

Պուշկինի և Հայաստանի կապին վերաբերող հոդվածում Պ. Հակոբյանը մանրամասն խոսում է այն հետազոտությունների մասին, որոնք գրվել են այդ թեմայով: Նա շեշտում է հանճարեղ ռուս գրողի ստեղծագործության բարերար ազդեցությունը հայ նոր գրականության վրա, հիանում է նրա համամարդկային գաղափարներով, սակայն համոզված պնդում է, թե Պուշկինը անտարբեր է եղել հայ ժողովրդի պատմական ճակատագրի նկատմամբ, մինչդեռ որոշ հետազոտողներ երևակայական կապեր են տեսնում Պուշկին մարդու և Հայաստանի միջև:

Պ. Հակոբյանը Խ. Աբովյանին նվիրված գրեթե բոլոր հետազոտություններում խոսում է մեծ լուսավորչի կյանքի մասին, սակայն այդ խնդրին առավել հանգամանալի անդրադառնում է «Վերելք» (1982 թ.) և «Խ. Աբովյանի կենսագրության առեղծվածները» (1997 թ.) գրքերում:

«Վերելք» գիրքը ներկայացնում է Դորպատի համալսարանի պրոֆեսոր Ֆրիդրիխ Պարրոտի (1791-1841) գլխավորած արշավախմբի վերելքը (27.IX.1829 թ.) Արարատ աստվածաշնչային լեռան գագաթը: Գիրքը վավերագրական պատմություն է, որը թեպետ ուղղված է միջին և ավագ դպրոցի աշակերտներին, սակայն նույնքան հետաքրքիր է ընթերցող լայն շրջանակի ու գիտնականների համար:

Խ. Աբովյանի առեղծվածային անհետացումից անցել է 163 տարի (2.IV.1848 թ.), սակայն արվ-յանագիտությունը շարունակում է առաջ քաշել զանազան վարկածներ: Պ. Հակոբյանն անդրադարձել է բոլոր վարկածներին ու բազմաթիվ փաստերով հերքել շրջանառված վարկածները: Այդ խնդիրներին է նվիրված հենց «Խաչատուր Աբովյանի կենսագրության առեղծվածները» գիրքը:

Պ. Հակոբյանի մեծագույն ծառայություններից մեկն էլ Խ. Աբովյանի դիմանկարի վավերականությունը հաստատելն է. դիմանկարը դորպատյան շրջանից է, ու մեզ է նայում ազգային հանճարը՝ իր սեփական դեմքով:

¹⁰ Sté u Brosset M. Каталог к книгам Эчмиадзинской библиотеки, изданный г. Броссе, Экстраординарным Академиком, СПб, 1840. Brosset M. Catalogue de la Bibliotheque d'Edchmiadzin, publié par M. Brosset, Académicien extraordinaire, SPb, 1840.

Հայագետի ջանքերի շնորհիվ 1981 թ. ԵՊՀ հրատարակչությունը լույս է ընծայում «Վերք Հայաստանի» վեպի բնագիրը՝ ծանոթագրություններով ու ընդարձակ բառարանով, որն էլ հիմք է դառնում 2011 թ. Բեյրութում լույս տեսած անվանի բանասեր, գրականագետ Արմենակ Եղիայանի՝ «Վերք Հայաստանի» վեպի արևմտահայերեն փոխադրությանը¹¹:

Պիոն Հակոբյանը բեղուն հայագետ, գրականագետ ու բնագրագետ էր: Նա դասական գրականագետ էր և այդպիսին էլ կմնա հայ գրականագիտության արդեն երկարամյա ու հարուստ պատմության մեջ: Այս է նրա գիտական ժառանգությանը տրված ճշմարիտ գնահատականը:

ԴՈՒՌԻՄԱՆՅԱՆ Ա. Գ.
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ

¹¹ Տե՛ս **Խաչատուր Աբովեան**, Վերք Հայաստանի, Ողբ հայրենասերի, Պատմական վեպ, Արևմտահայերենի փոխադրումը՝ Արմենակ Եղիայանի, «Հայրգի մատենաշար» - թիվ 9, Պեյրութ, 2011: